ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/79

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Երվադա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով բաց մրցույթ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ԴԿԲՐ 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Երվադա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 03.07.2020թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է՝ չկայացած հայտարարել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով բաց մրցույթը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.07.2020թ.-ին:

06.07.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/79 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

10.07.2020թ.-ին, 22.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 22.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Երվադա» ՍՊԸ-ն 03.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է <<ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20>> ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «Երվադա» ՍՊԸ-ն /13.06.2020թ. հայտը ներբեռնել armeps համակարգ/:

Հայտը ներբեռնելու արդյունքում «Երվադա» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեին ARMEPS համակարգից ստացել է ոչ ավտոմատ ծանուցում առ այն, որ ներկայացված հայտը հաջողությամբ բեռնվել է համակարգ:

«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2020թ. հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի ներբեռնված հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չէ և արդյունքում հայտը մերժել:

Անհրաժեշտ է նշել, որ մուտք գործելով www.armeps.am կայք և ուսումնասիրելով վերը նշված ծածկագրով ընթացակարգի կարգավիճակը, նկատելի է այն հանգամանքը, որ «Երվադա» ՍՊԸ-ի անվան կողքին «հայտ» անվանումով սյունակում առկա է ZIP անվանումով ֆայլը, որը ներբեռնելուց հետո պարզվում է, որ վերոհիշյալ ֆայլը դատարկ է, այսինքն հայտում բացակայում են կցված փաստաթղթերը:

Մինչդեռ www.armeps.am համակարգում տվյալ ընթացակարգով ՍՊԸ-ի հայտի ուսումնասիրությունը վկայում է, որ գնային առաջարկը ներբեռնված է, սակայն անհասկանալի պատճառներով այն փաստացի բացակայում:

Մասնավորապես, «Երվադա» ՍՊԸ-ի հայտի փաթեթում առկա «Haek» XML ֆայլի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտի փաթեթում ՍՊԸ-ի կողմից ներբեռնվել են հետևյալ փաստաթղթերը. Պիտանելիության չափորոշիչ, Դիմում-հայտարարություն, Հավելված 1.1, Հայտի ապահովում, Սարքերի և սարքավորումների նկարագիր/ Proof_Documents, Համատեղ գործունեության պայմանագիր, Գնային առաջարկ և այլն:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Երվադա» ՍՊԸ-ն համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես 15.06.2020թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի հայտում բացակայում է մասնակցի կողմից ներկայացվելիք որևէ փաստաթուղթ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Մինչդեռ www.armeps.am կայքն ուսումնասիրելով վերը նշված ծածկագրով ընթացակարգի կարգավիճակը, փաստ է այն հանգամանքը, որ «Երվադա» ՍՊԸ-ի անվան կողքին «հայտ» անվանումով սյունակում առկա է ZIP անվանումով ֆայլը, որը ներբեռնելուց հետո պարզվում է, որ հայտում բացակայում են կցված փաստաթղթերը:

Մինչդեռ www.armeps.am համակարգում փվյալ ընթացակարգով ՍՊԸ-ի հայտի ուսումնասիրությունը վկայում է, որ գնային առաջարկը ներբեռնված է, սակայն անհասկանալի պատճառներով այն փաստացի բացակայում:

Մասնավորապես, «Երվադա» ՍՊԸ-ի հայտի փաթեթում առկա «Haek» XML ֆայլի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտի փաթեթում ՍՊԸ-ի կողմից ներբեռնվել են հետևյալ փաստաթղթերը. Պիտանելիության չափորոշիչ, Դիմում-հայտարարություն, Հավելված 1.1, Հայտի ապահովում, Սարքերի և սարքավորումների նկարագիր/ Proof_Documents, Համատեղ գործունեության պայմանագիր, Գնային առաջարկ և այլն:

«Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը քննելիս՝ հիմքում դնել ոչ թե «Երվադա» ՍՊԸ-ի կողմից հայտը ներբեռնելու արդյունավետության հարցի քննարկումը, այլ այն կարևորագույն փաստը, որ «Haek» XML ֆայլի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտի փաթեթում ՍՊԸ-ի կողմից ներբեռնվել են հետևյալ փաստաթղթերը. Պիտանելիության չափորոշիչ, Դիմում-հայտարարություն, Հավելված 1.1, Հայտի ապահովում, Սարքերի և սարքավորումների նկարագիր/ Proof_Documents, Համատեղ գործունեության պայմանագիր, Գնային առաջարկ և տեսանելի է նաև ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը՝ սակայն գնահատող հանձնաժողովը հայտը մերժել է՝ փաթեթի հայտում չկցված փաստաթղթերի հիմքով և այն, որ armeps.am համակարգի թերի աշխատանքի շնորհիվ անգամ հայտը ներբեռնելիս խնդիր առաջանալու դեպքում armeps.am համակարգից մասնակցին ուղարկվում է ծանուցում, որ հայտը ներբեռնվել է: Մինչդեռ armeps.am համակարգի նման թերի կարգաբերումը ուղղակիորեն առաջացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված մասնակիցների մասնակցության իրավունքի խախտում, քանի որ նման բովանդակությամբ ծանուցումը թյուրիմացության մեջ է գցում մասնակցին՝ հավաստացիացնելով վերջինիս, որ նրա հայտը հաջողությամբ ներբեռնվել է և ոչ մի խնդիր առկա չէ:

Փաստացիորեն հայտը ներբեռնելու արդյունքում Բողոքաբերը ներբեռնել է գնային առաջարկը, ինչը ապացուցվում է նաև XML Document ուսումնասիրությունը, սակայն հայտերը բացվելուց հետո պարզվել է, որ հայտում առանձին ֆայլերը առկա չեն, ինչը, Բողոքաբերի կարծիքով, հանդիսանում է ARMEPS համակարգի թերի աշխատելու արդյունք, քանի որ փաթեթում այնուամենայնիվ թեկուզ և ոչ ընթեռնելի տարբերակով առկա է գնային առաջարկը:

Կարծում ենք, որ Ձեր կողմից համապատասխան որոշմամբ մասնակցի մասնակցության իրավունքի վերականգնումը կստիպի armeps.am համակարգը սպասարկող ընկերությանը վերջապես վերացնել համակարգում առկա խնդիրը:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ վիճարկվող ընթացակարգի շրջանակներում տեղի է ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների խախտում, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:»:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է չկայացած հայտարարել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով բաց մրցույթը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10056-2020 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 03.07.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 08.07.2020թ.-ին թիվ Մ-26289-2020 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել երեք մասնակիցներ՝ ԱՁ «Ռաֆայել Վարդանյան» և «Մեկուսիչ» ԱԿ-ն (համատեղ), «Ամարաս-Յուս» ՍՊԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն:

Հայտերի բացման և գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ամարաս-Յուս» ՍՊԸ հայտում, ներկայացրած փաստաթղթերը լրացված չեն հրավերով սահմանված կարգով, մասնավորապես՝

1) հավելված N 1.1-ում մասնակիցը լրացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

2) իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել.

3) հավելված N 2-ում՝ գնային առաջարկի ընդհանուր գինը տառերով լրացված է գոյություն չունեցող թիվ:

«Երվադա» ՍՊԸ հայտում, հրավերով պահանջվող փաստաթղթերից, որևէ փաստաթուղթ ներբեռնված չէ:

ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»:

Նույն որոշման 41-րդ կետի համաձայն «Եթե հայտերի բացման իրականացված գնահատման արդյունքում մասնակցի անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ...»:

Համաձայն գնման ընթացակարգի հրավերի «ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ» բաժնի

4.1 «Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է»:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «40»-րդ օրվա ժամը «13:00»-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում- հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ

նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

3) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.

Համաձայն գնման ընթացակարգի հրավերի «ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ» բաժնի

8.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Փաստորեն «Երվադա» ՍՊԸ հայտում որևէ փաստաթուղթ առկա չէ, մասնավորապես էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված գնային առաջարկ:

Գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3- րդ կետի, ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 40-րդ, 41-րդ կետերի և գնման ընթացակարգի հրավերի պահանջներով «Երվադա» ՍՊԸ հայտը գնահատել է «անբավարար» և մերժել է:

«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը բաժնում բարձրացված հարցը, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ որոշում ընդունելուն, բացարձակապես անհասկանալի է, քանի որ բողոքաբերը իր բողոքում ներկայացնում է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի թերի աշխատելու պատճառը, որը ի դեպ նշում է մի քանի անգամ:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն գտնում է, որ «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի պահանջը՝ «Չկայացած հայտարարել ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ԴԿԲՐ 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով բաց մրցույթը, ամբողջությամբ անհիմն է, քանի որ համաձայն հրավերի «ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ» բաժնի՝ «Սույն ընթացակարգը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե սույն ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ էլեկտրոնային գնումների համակարգը խափանված է», սակայն համակարգի խափանված լինելու մասին որևէ պաշտոնական հաղորդագրություն առկա չէ, ուստի և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/79 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ԴԿԲՐ 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.05.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել մինչև 16.06.2020թ.-ին ժամը 13:00-ն ներառյալ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 15.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջվող փաստաղթերից որևէ մեկը ներբեռնված չէ:

v. Բողոքներ քննող անձը 14.07.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/14891-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել, արդյո՞ք հնարավոր է Ընկերության կողմից հայտի փաթեթով ներկայացված հավելվածները համակարգում

չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

vi. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.07.2020թ.-ին թիվ Ն/26-1/15297-2020 գրությամբ հայտնել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

vii. https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Երվադա» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթը հնարավոր չէ բեռնել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 03.07.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է

մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.05.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով գնման ընթացակարգ մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Երվադա» ՍՊԸ-ի հայտում հրավերով պահանջվող փաստաղթերից որևէ մեկը ներբեռնված չէ:

Բողոքներ քննող անձը 14.07.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/14891-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել, արդյո՞ք հնարավոր է

Ընկերության կողմից հայտի փաթեթով ներկայացված հավելվածները համակարգում չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.07.2020թ.-ին թիվ Ն/26-1/15297-2020 գրությամբ հայտնել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Երվադա» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթը հնարավոր չէ բեռնել:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ընթացակարգին «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Երվադա» ՍՊԸ-ն ներբեռնել է թերի փաթեթ, որի արդյունքում հայտի փաթեթը հնարավոր չէ բեռնել, որպես հետևանք բացակայել են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում և գնային առաջարկը, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Երվադա» ՍՊԸ-ի կողմից 03.07.2020թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/79 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ